



ԱՆՈՏԱՑԻԱ

***Մասնագիտական կրթական ծրագրերի ձևավորման սկզբունքները՝
«Կինոարվեստ» մասնագիտության օրինակի վրա***

Աննա Երզնկյան

Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, Դեկան

«Կինոարվեստ» մասնագիտական կրթական ծրագիրը իր կառուցվածքով, բովանդակությամբ և վերջնարդյունքներով միտված է խթանելու ուսումնառության որակը: Այս ենթատեքստում կարևորվում է դասավանդման մեթոդաբանության դրական փորձը, որը ելնելով ԵԹԿՊԻ-ի առաքելությունից՝ միտված է թողարկելու ազգային կինոարվեստը զարգացնելու ունակ մասնագետներ: Այսպիսով «Կինոարվեստ» մասնագիտական կրթական ծրագրի նպատակն է՝

1. կազմակերպել կինոարվեստի մասնագիտական տեսական հիմնահարցերի խորը և առաջանցիկ գիտելիքների փոխանցումը,
2. ձևավորել դասական դրամատուրգիայի և ժամանակակից կինոդրամատուրգիայի իմացությունը, վերլուծելու կարողությունը,
3. նպաստել դերասանի վարպետության, մոնտաժի տեսության և պրակտիկայի, լուսանկարչության, սցենարի վարպետության, ֆիլմի ձայնային, նկարչական լուծման հիմնական տարրերի տիրապետմանը,
4. խթանել գործնական հմտությունների, ունակությունների և կարողությունների տիրապետմանը,
5. զարգացնել տեխնիկական նորությունների, համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտություններ,
6. խթանել ստեղծագործական, կազմակերպական- արտադրական գործունեությունը՝ կինոյի, հեռուստատեսության բնագավառներում:



Դասավանդման և ուսումնառության մեթոդները հիմնված են ուսանողակենտրոն մոտեցման հենքի վրա: Նրանք ձևավորում են դասախոսությունների խմբային և անհատական դասընթացներ պրակտիկ աշխատանքի միջոցով: Ուսումնառության մեթոդաբանության հիմքում դրվում է նաև վարպետաց դասերի անցկացման սկզբունքը, որոնք վարում են անվանի կինոգործիչներ արտասահմանից և Ռուսաստանից: Վարպետաց դասերը տեսագրվում են, անհրաժեշտության դեպքում տեսագրված նյութերը օգտագործվում են դասավանդման պրոցեսի ընթացքում: Այդ փորձը թույլ է տալիս, ավելի լայն դասախոսական և ուսանողական շրջանակներին, ծանոթացնելու օտարերկրյա մասնագետների փորձին:

Ինստիտուտում ստեղծվել է «ՍՏՈՒԿ փրոդաքշն» ուսանողական ստեղծագործա-արտադրական բազա, որը թույլ է տալիս բարձրացնել թե ընթացիկ և թե դիպլոմային աշխատանքների որակը:

ABSTRACT

Anna Erzinkyan

Yerevan State Institute of Theatre and Cinematography, Dean

The principles of forming professional educational programs on the example of "Cinematography"

“Cinematography” professional educational program within its structure, content and learning outcomes is aimed to promote the quality of education. In this context are highlighted the teaching methodology and positive experience which are from the mission of YSITC. We organize such trainings that are aimed at producing professionals capable for developing national cinematography. So, the aim of professional educational program “Cinematography” is:

1. to organize transmission of deep and advanced knowledge of theoretical issues of “Cinematography”,



2. to figure the knowledge of classic drama and contemporary movie-drama skills, the ability to analyze,
3. to contribute the actor-skills, theory and practice of installation, photography, script-skills, the sound of film, the main elements of the domination of the art solution,
4. to promote practical skills, abilities and capacities for management,
5. to develop technical updates, access to computer and IT skills,
6. to stimulate creativity, organizational and productional activities in film and television sectors.

The teaching and learning methods are based on student-centered approaches. They form a group and individual sessions of lectures by practical work. Learning methodology is based on the principle of conducting master-classes, which are run by prominent filmmakers from abroad. The master-classes are recorded, and when it is appropriate, the video materials used in the teaching process. This experience allows us to introduce experience of foreign professionals to a wider range of teaching and student staff.

The Institute has created "STUK Production". It is student`s creation and production base which allows to increase the quality of current and diploma works.